ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՆԳՀԾՁԲ-20/46

ք. Երևան «27» 04 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուզաննա Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **2 (երկու)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **13,278,000** (տասներեք միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ք. Երևան 0012, Կոմիտաս 29
Կառավարական տուն 2,	ՀՎՀՀ 04112197
ՀՎՀՀ 02698732	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ 2050022238291001
Հ/Հ 900011032472	

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ **Տնօրեն՝**

_____ **Վ. Գասպարյան** _____ **Ռ. Վարդանյան**

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված N 1
«27» 04 2020թ. կնքված
N ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/46 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	64211340/1	**էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ**	**Ծառայությունը նախատեսում է Երիտասարդական պորտալի պահպանումը** Երիտասարդական պորտալի (այսուհետ՝ պորտալ) պահպանման նպատակն է երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ հավաքել տեղեկատվություն, մշակել ու տարածել հասարակության, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում, խթանել երիտասարդության ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Պորտալին հնարավոր պետք է լինի միանալ նախկինում գործող www.erit.am, www.youtharmenia.am, www.youthweb.am, www.cragrer.am ինտերնետային հասցեներով: **Ծառայություն մատուցող կազմակերպությունը պորտալի պահպանման համար պետք է.** **1. Ապահովի պորտալի վեց հիմնական բաժինների պարբերական թարմացումները և տեխնիկական աշխատանքի վերահսկողությունը: Այդ թվում՝** **«Երիտասարդ. Նորություններ» բաժնում** ենթաբաժինները պետք է թարմացվեն առնվազն հետևյալ չափաբաժիններով. 1) «Նորություններ»՝ առնվազն 586 նորություն (վերնագիր + ամսաթիվ + ժամ + համառոտագրում + տեքստ + նկար կամ վերնագիր + ամսաթիվ + ժամ + համառոտագրում + տեքստ +վիդեո (10 վիդեո)): Տեխնիկական լուծումները թույլ են տալիս նորությունները դասակարգել ըստ բնույթի, օրինակ՝ գլխավոր նորություն, ամենից շատը կարդացված նորություն, կարևոր նորություն, հասարակ	դրամ	**13,278,000**	1	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ

			նորություն և այլն, կամ առանձնացնել ըստ թեմաների, օրինակ՝ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող նորություններ: 10 վիդեո - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) նախաձեռնությամբ իրականացվող միջոցառումների վերաբերյալ մինչև 2 րոպե տևողությամբ (տևողությունը համաձայնեցնել Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության հետ) full HD տեսաշար՝ ուղիղ խոսքով: Պատրաստված և պորտալում տեղադրված վիդեոարտադրանքը info@escs.am էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը միջոցառումից հետո մեկօրյա ժամկետում: 2) «Վերլուծություն»՝ առնվազն 10 վերլուծական հոդված (վերնագիր + ամսաթիվ + համառոտագրում + տեքստ + լուսանկար): Կառանձնացվեն երիտասարդությանը մտահոգող խնդիրները: Դրանց մասին պետք է գրվեն վերլուծական բնույթի նյութեր (հոդվածներ): 3) «Հարցազրույց»՝ առնվազն 43 հարցազրույց (վերնագիր + ամսաթիվ + համառոտագրում + տեքստ + հարց, պատասխան + լուսանկար կամ վերնագիր + ամսաթիվ + համառոտագրում + տեքստ + հարց, պատասխան + վիդեո (3 վիդեո)): Երիտասարդները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալու երիտասարդական ոլորտի փորձագետների հետ, նրանց տեսակետներին, կարդան իրենց խնդիրների լուծման ուղիների մասին և այլն: 3 վիդեո - Նախարարության նախաձեռնությամբ հարցազրույց, կարող է լինել նաև պարզաբանում կամ ուղերձ, full HD, 30 վայրկյանից մինչև 30 րոպե տևողությամբ (տևողությունը համաձայնեցնել Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության հետ): Նկարահանելուց հետո մեկօրյա ժամկետում մոնտաժված վիդեոարտադրանքը info@escs.am էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը և տեղադրել պորտալում: 4) «Պատկերասրահ»՝ առնվազն 134 միջոցառման լուսանկարներ (պատկերասրահի վերնագիր + ամսաթիվ + լուսանկար + լուսանկարի համառոտագրում): Պետք է ներկայացվեն տեղի ունեցած միջոցառումների լուսանկարները: 5) «Հայտարարություններ»՝ համաձայն Նախարարության տրամադրման (վերնագիր + ամսաթիվ + համառոտագրում + տեքստ + նկար): Նյութերը պետք է տեղադրվեն ինչպես հայերեն, այնպես էլ պորտալի անգլերեն տարբերակներում: Տեղադրվող նյութերը պետք է համամասնորեն թարմացվեն տարբեր խորագրերում:				

			«Երիտասարդ. Նորությունների» խորագրերում և ենթաբաժիններում նյութերի պատրաստում և տեղադրում, ֆոտո և վիդեոարտադրանքների պատրաստում, թարգմանչական և լրագրողական աշխատանքների կատարում: «Երիտասարդ. Նորությունների» “Php MySQL” ծրագրով ստեղծված cms-ի վարում: «Երիտասարդ. Նորությունների» խմբագրական, պորտալի սպասարկման աշխատանքների համակարգում և վերահսկում, ինչպես նաև «Երիտասարդ. Նորություններ» բաժնի աշխատանքների ներկայացում էլեկտրոնային կայքերում: **«Երիտասարդ. Ծրագրեր»** www.cragrer.am առցանց դրամաշնորհային համակարգի ադմինիստրատիվ և գործածողների ինտերֆեյսի բարելավման աշխատանքների ծրագրում և իրագործում: Համակարգի միջոցով դիմած հասարակական կազմակերպությունների և ծրագրերի վիճակագրության վարում: Նախարարության կողմից հայտարարված դրամաշնորհային հայտարարությունների տեղադրում, ծրագրերի ընդունման անխափան աշխատանքի ապահովում, տվյալների հավաքում, վիճակագրության կազմում և սահմանված ժամկետներում ներկայացում Նախարարություն: Դիմած ծրագրերի վերաբերյալ ամփոփ վերլուծական տեղեկատվության տրամադրման ապահովում: Համակարգում տվյալների որոնման, ֆիլտրացիայի և դուրսբերման գործիքների լրամշակում և բարելավում: Գրանցման դիմումի ձևում ուղղորդումների և հուշումների համակարգի կիրարկում: Գրանցման, դիմումի ձևում փոփոխությունների կատարում՝ ըստ նախորդ փուլի արձագանքների և առաջացած խնդիրների: Նախորդ թեստային փուլին մասնակցած գործածողների (դիմող կազմակերպություններ, ադմինիստրատորներ) հետ համատեղ բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, տեխնիկական ընթացիկ բոլոր թերությունների վերացում: **«Երիտասարդ. Աշխատանք»** Նոր աշխատատեղերի ավելացման նպատակով գործատուների հետ հետադարձ կապի պահպանում, գրանցված նոր կազմակերպությունների և ստեղծված աշխատատեղերի պարբերական ակտիվացում և հաստատում: Աշխատանք որոնող երիտասարդների էջերի պարբերական մոնիտորինգի իրականացում: “Php MySQL” ծրագրով ստեղծված cms-ի վարում: Բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, տեխնիկական ընթացիկ բոլոր թերությունների վերացում: Էլեկտրոնային փոստով ստացված նամակների օպերատիվ հետադարձ կապի ապահովում: Առնվազն 67 աշխատատեղի վերաբերյալ տեղեկատվության տեղադրում:				

			«Երիտասարդ. Տեղեկատու» Գրանցված կազմակերպությունների և փորձագետների էջերի ստուգում և հաստատում: Նոր կազմակերպությունների և փորձագետների ներգրավում տեղեկատվական բազա: "Php MySQL" ծրագրով ստեղծված cms-ի վարում: Բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, տեխնիկական ընթացիկ բոլոր թերությունների վերացում: Էլեկտրոնային փոստով ստացված նամակների օպերատիվ հետադարձ կապի ապահովում: **«Երիտասարդ. Գրադարան»** Նոր փաստաթղթերի, ուսումնասիրությունների և նյութերի վերբեռնում: Գրադարանի բովանդակության շարունակական մոնիտորինգ և հարստացում: Գրադարանի նյութերի հանրայնացում և հաճախելիության բարձրացում: Տարբեր տեղական և միջազգային երիտասարդական կազմակերպությունների և հրատարակչությունների հետ հետադարձ կապ՝ նոր նյութերի հայթայթման և տեղադրման նպատակով: "Php MySQL" ծրագրով ստեղծված cms-ի վարում: **«Երիտասարդ. Առողջ ապրելակերպ»** Նյութերի և իրադարձությունների պարբերական թարմացում: Սոցիալական ցանցերի շարունակական մոնիտորինգ՝ նոր իրադարձությունների հայտնաբերման նպատակով: Բաժնի սպասարկման ժամանակահատվածում հիմնական բաժինները պետք է թարմացվեն առնվազն 20 նյութերով և իրադարձություններով: "Php MySQL" ծրագրով ստեղծված cms-ի վարում: **2. Ապահովի պորտալի տեղակայման վիրտուալ սերվերը** Հասանելիություն հայկական ցանցերին առնվազն 1 գբիթ/վրկ արագությամբ, օպերացիոն համակարգի անվճար տեղադրում, 24/7 տեխնիկական աջակցություն, իրական IP հասցե/ենթացանց, թողունակությունը առնվազն 100Mbit/s, պրոցեսորը (CPU)՝ 2 հատ, օպերատիվ հիշողությունը՝ RAM 4 GB, հիմնական հիշողությունը՝ HDD 100 GB, սերվերի 24-ժամյա օպերատիվ սպասարկում: **3. Ապահովի պորտալի ընթացիկ մոնիթորինգի իրականացման համար** "Google Analytics" -ում պորտալի գրանցումն և Նախարարությանը մուտքի հնարավորությունը: **4. Ապահովի պորտալի ֆեյսբուքյան էջի վարումը և զարգացումը:** Նախարարությունն ըստ անհրաժեշտության կարող է պահանջել Ծառայություն մատուցող կազմակերպությունից Նախարարության կողմից իրականացվող երիտասարդական միջոցառումների լուսաբանման նյութերը, այդ թվում նաև լուսանկարները, առանց				

			հեղինակային իրավունքը հավաստող տարբերանշանի և նյութը պատրաստող լրագրողի վերաբերյալ տեղեկատվության: Նախարարությունը ծառայություն մատուցող կազմակերպությանն է տրամադրում պորտալի ֆայլային արխիվի (file backup) և տվյալների բազայի (database backup) մուտքի օգտանունն ու գաղտնաբառը, ինչը հնարավորություն կտա լիովին սպասարկել համակարգը: Ծառայությունների մատուցման ավարտին, եռօրյա ժամկետում, Ծառայություն մատուցող կազմակերպությունը Նախարարությանն է տրամադրում պորտալի ֆայլային արխիվը (file backup) և տվյալների բազան՝ ողջ բովանդակությամբ (database backup), ինչպես նաև դոմեյնների հաշիվների մուտքային տվյալները:				

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ռ. Վարդանյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«27» 04 2020թ. կնքված
N ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/46 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2020թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, մինչև 30-ը	Ընդամենը
1	64211340/1	էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ					1,659,750	3,319,500	4,979,250	6,639,000	8,298,750	9,958,500	11,618,250	13,278,000	13,278,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Վ. Գասպարյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- **Ռ. Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿՈՐՅՈՒՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
INECOBANK

20.04.2020թ № G 10039

ԵՐԱՇԽԻՔ N EA20/00184
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **<<ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46>>** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **<<ԻԷՍԱՅՍԻ>> ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք **<<ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46>>** ծածկագրով պայմանագրով նախատեսված պարտավորությունների համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **13,278,000.00 (տասներեք միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Երաշխիքն անհետկանչելի է:

4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է «**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46**» ծածկագրով կնքված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ, քան մինչև **05/02/2021թ.** ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) երաշխիքի պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
<<ԿՈՐՅՈՒՆ>> Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ **ԲԱԲԿԵՆ ԻՄԻՐԶՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
«INECOBANK» CJSC
«ԿՈՐՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ԲԱՆԿԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
02518512

Կատարող՝ Մարիամ Գրիգորյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ 010-510-510 (5825)

ԿՈՐՅՈՒՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
INECOBANK

20.04.2020թ. № G10040

ԵՐԱՇԽԻՔ N EA20/00185
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **<<ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46>>** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **<<ԻԷՍԱՅՍԻ>> ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք **<<ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46>>** ծածկագրով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **1,327,800.00 (մեկ միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Երաշխիքն անհետկանչելի է:

4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է «**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46**» ծածկագրով կնքված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ, քան մինչև **05/02/2021թ.** ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/46** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) երաշխիքի պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: .

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
<<ԿՈՐՅՈՒՆ>> Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ **ԲԱԲԿԵՆ ԻՄԻՐԶՅԱՆ**

Կատարող՝ Մարիամ Գրիգորյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ 010-510-510 (5825)